

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

N	Հոդված N°	Ամսաթիվ	Համարը	Փոփոխություն և/կամ լրացում
1.	<i>1-ին հոդվածը փոփ.</i>	<i>24.11.01</i>	<i>ՀՕ-251</i>	Օենքի 1-ին հոդվածի վերնագրից հանել «և նպատակները» բառերը
2.	<i>2-րդ հոդվածը լրաց., փոփ.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	2-րդ հոդվածի 1-ին մասը «ներառում է» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,» բառերով, իսկ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» բառերը փոխարինել «Զանգվածային լրատվության մասին» բառերով:
3.	<i>3-րդ հոդվածը փոփ.</i>	<i>26.09.01</i>	<i>ՀՕ-233</i>	<p>օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.</p> <p>«Պաշտոնական հաղորդագրություն (տեղեկատվություն)՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Ազգային ժողովի նախագահի, կառավարության, վարչապետի, սահմանադրական դատարանի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, կենտրոնական բանկի, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև օրենքով կամ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում պետական այլ մարմինների կամ նրանց լիազորած անձանց պաշտոնապես ներկայացրած և հրապարակման ենթակա՝ պետության ներքին և արտաքին քաղաքականության վերաբերյալ, հանրության շահերի պաշտպանությանն առնչվող, արտակարգ իրավիճակներին վերաբերող լրատվություն:»:</p>
		<i>24.11.01</i>	<i>ՀՕ-251</i>	<p>Օրենքի 3-րդ հոդվածի՝</p> <p>ա) վեցերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«հեռուստառադիոհեռարձակման արտոնագիր (լիցենզիա)՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս օգտվել որոշակի եթերային հաճախությունից (կապուղուց), կաբելային (լարային) ցանցից և իրականացնել որոշակի ծրագրային քաղաքականություն՝ սեփական արտադրության կամ այլ անձանց արտադրած հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակելու նպատակով.».</p> <p>բ) ութերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«հեռուստառադիոընկերություն (հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն)՝ իրավաբանական անձ, որն արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա (բացառությամբ Հանրային հեռուստառադիոընկերության) հեռարձակում կամ վերահեռարձակում է զանգվածային տեղեկատվություն՝ օգտագործելով սեփականության, վարձակալական կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող հեռուստառադիոսարքավորումներ և պատասխանատվություն է կրում արտոնագրման (լիցենզավորման) պայմանների, սույն օրենքի և այլ իրավական նորմերի կատարման համար.».</p> <p>գ) տասնմեկերորդ պարբերությունից հանել «արտադրության և (կամ)» բառերը:</p>

		03.12.03	ՀՕ-69-Ն	3-րդ հոդվածի վերջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «պաշտոնական հաղորդագրություն (տեղեկատվություն)՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության, կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական բանկի գործունեության մասին պաշտոնապես ներկայացված, պետության ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող, հանրության շահերին առնչվող, արտակարգ իրավիճակներին վերաբերող լրատվություն»:
		03.12.03	ՀՕ-71-Ն	3-րդ հոդվածի 12-րդ մասի «թարգմանությամբ» բառից հետո լրացնել «կամ սուրդոթարգմանությամբ» բառերը:), Օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «սուրդոթարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը հայերեն ձեռք-լեզվով»:
	լրաց.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով. «փոխկապակցված անձինք՝ ամուսիններ, ծնողներ, երեխաներ, քույրեր, եղբայրներ»:) )
4.	4-րդ հոդվածը փոփ.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 4-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասի «Սպառողներն իրավունք ունեն» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի» բառերով. 2) 4-րդ մասի «հեռուստառադիոլսարանի» բառը փոխարինել «մարդկանց» բառով:
5.	7-րդ հոդվածը փոփ.	24.11.01	ՀՕ-251	Օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասից հանել «պատրաստումը և» բառերը, իսկ «են» օժանդակ բայը դարձնել «է»:
6.	8-րդ հոդվածը խմբ.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 8-րդ հոդվածը «բացառությամբ» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ. «օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող, ինչպես նաև ապօրինաբար կատարված տեսաձայնագրությամբ ստացված տեղեկատվության տարածման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերի»:
7.	9-րդ հոդվածը փոփ.	03.12.03	ՀՕ-71-Ն	Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «պակաս լինել» բառերից հետո լրացնել «ընդ որում, սուրդոթարգմանությամբ հեռուստահաղորդումները հաշվարկվում են կրկնակի ժամաքանակով և չեն կարող հայրենական արտադրության հեռուստահաղորդումների եթերաժամի 5 տոկոսից ավելի լինել» բառերը:
	խմբ.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում կողավորված հեռուստահաղորդումների, կաբելային հեռուստատեսության կամ արբանյակային հեռուստատեսության արբանյակային ընդունման (անհատական) դեպքերի վրա»:
8.	10-րդ հոդվածը խմբ.	24.11.01	ՀՕ-251	Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումները Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են ամբողջությամբ վերահեռարձակվել միջպետական պայմանագրի կամ Ազգային հանձնաժողովի կողմից

				<p>վերահեռարձակողին տրված արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա՝ օգտագործելով առկա հեռուստատառադիոհաճախությունների մեկ հինգերորդից ոչ ավելին՝ յուրաքանչյուր ընդգրկույթի (դիապագոնի) համար (մետրային, դեցիմետրային, կարճ, գերկարճ և այլ ալիքներ): Վերահեռարձակման համար արտոնագիր (լիցենզիա) տալու կարգը սահմանում է Ազգային հանձնաժողովը:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված (լիցենզավորված) հեռուստատառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստատառադիոընկերությունների հաղորդումները կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով՝ պահպանելով օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածների պահանջները ու արտոնագրման (լիցենզավորման) պայմանները՝ վերահեռարձակումից առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ազգային հանձնաժողովին:»:</p>
9.	11-րդ հոդվածը խմբ.	16.11.07	ՀՕ-221-Ն	<p>11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 11. Հեռուստահաղորդումներն ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության ժամանակահատվածում</p> <p>«Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝</p> <p>ա) հեռուստատառադիոհաղորդումները հեռարձակվում են ընտրությունների (հանրաքվեների) մասին օրենսդրությանը համապատասխան.</p> <p>բ) հեռուստատառադիոընկերությունները պարտավոր են հավասար պայմաններ ապահովել թեկնածուների և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար՝ հրապարակավ հայտնել վճարովի հաղորդումների՝ իրենց եթերաժամի գինը և հեռարձակման պայմանագրի էական այլ պայմաններ.</p> <p>գ) հեռուստատառադիոընկերությամբ հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչությանը մասնակցող կողմերի) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության վերաբերյալ պետք է ներկայացվի անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար և հավասար պայմանների պահպանումը.</p> <p>դ) թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցություններին դաշինքներին նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին տրամադրվող նախընտրական քարոզչական հեռուստահաղորդումների սփռումը հեռուստատեսությամբ (հանրային հեռուստատառադիոընկերության դեպքում՝ նաև օրենքով սահմանված անվճար եթերաժամը) պետք է ուղեկցվի էկրանի վրա պարտադիր անընդմեջ լուսագրով՝ «նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչություն», իսկ ռադիոսփռման դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երեք անգամ, պետք է հիշեցվի դրա</p>

				մասին: Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչություն իրականացնել:»:
10.	12-րդ հոդվածը լրաց.	24.11.01	ՀՕ-251	Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Հատկացվող եթերաժամանակը եթերային յուրաքանչյուր ժամում չի կարող գերազանցել 10 րոպե:»:
11.	14-րդ հոդվածը լրաց.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.  «Հեռուստառադիոընկերությունները հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի տվյալները ներկայացնում են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Դիտարկման արդյունքները համադրվում են հեռուստառադիոընկերությունների կողմից ներկայացված հաշվառման մատյանների տվյալների հետ: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման վերաբերյալ գրանցումները կարող են կատարվել նաև էլեկտրոնային տարբերակով:»:
12.	15-րդ հոդվածը փոփ.	03.12.03	ՀՕ-69-Ն	Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:
	խմբ.	16.16.07	ՀՕ-221-Ն	Օրենքի 15-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բարեգործական հովանավորությունը չի կարող ֆինանսավորվել կուսակցությունների, նախընտրական հիմնադրամների և կրոնական կազմակերպությունների միջոցներից:»:
		28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 15. Հովանավորությունը հեռուստառադիոհաղորդումների իրականացման գործում Հովանավորությունը հեռուստառադիոընկերության գործունեությանը աջակցելու և հաղորդումների որակի բարձրացմանը օժանդակելու նպատակով նյութական, ֆինանսական և (կամ) օրենսդրությամբ չարգելված այլ մասնակցության ձև է, որը նպաստում է տվյալ ֆիզիկական

				<p>կամ իրավաբանական անձի անվան, ապրանքանիշի վարկանիշի կամ հեղինակության բարձրացմանը:</p> <p>Հովանավորված ծրագրերի բովանդակությունը և ուղղվածությունը չպետք է կրեն հովանավորի միջամտությունը և այլ բնույթի ազդեցություն, եթե դա միջամտություն է հովանավորվողի պարտավորություններին և անկախությանը:</p> <p>Արգելվում է հովանավորությունը՝</p> <p>ա) քաղաքական կուսակցությունների, նախընտրական հիմնադրամների և կրոնական կազմակերպությունների կողմից կամ դրանց միջոցներից.</p> <p>բ) լրատվական թողարկումների, պաշտոնական հաղորդագրությունների և քաղաքական հաղորդումների համար.</p> <p>գ) դեղատոմսով տրամադրվող դեղերի անունների հիշատակումով, արտադրությամբ և վաճառքով, ինչպես նաև օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվող ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից:</p> <p>Ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից հովանավորության դեպքում կիրառվում են «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:</p> <p>Հովանավորությամբ ստեղծված հեռուստառադիոհաղորդումներում կարող են նշվել տեղեկություններ հովանավորի մասին, ներկայացվել խորհրդանիշեր, մակագրություններ, կարճ հայտարարություններ՝ միայն հաղորդման սկզբում և վերջում, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուրը մեկ րոպե տևողությամբ:»:</p>
13.	<b>17-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.11.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 17-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հեռուստառադիոընկերությունների հիմնադրման ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ելքն ապահովող կապիտալի չափից:»:</p>
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-69-Ն</b>	<p>Օրենքի 17-րդ հոդվածի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) «ե» կետն ուժը կորցրած ճանաչել.</li> <li>2) 2-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Ավելի բարձր բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով:»:</li> </ol>
14.	<b>18-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.11.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 18-րդ հոդվածի՝</p> <ol style="list-style-type: none"> <li>ա) առաջին մասի «կանոնադրության» բառը փոխարինել «կանոնակարգի» բառով.</li> <li>բ) երկրորդ մասից հանել «ծրագրային քաղաքականության հիմնական դրույթները» բառերը:</li> </ol>
15.	<b>19-րդ հոդվածը լրաց</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.</p> <p>«Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող հանրային ռադիոյի և հեռուստատեսության գործունեության</p>

				անկախությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածով և օրենքներով սահմանված այլ դեպքերի:»:
16.	22-րդ հոդվածը լրաց	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը, մինչև հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին՝ ըստ սույն օրենքի 22-րդ հոդվածում նշված եկամուտների աղբյուրների:»:
17.	23-րդ հոդվածը փոփ.	03.12.03	ՀՕ-69-Ն	Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասության «Հեռուստառադիոընկերությունները» բառը փոխարինել «Հեռուստաընկերությունները» բառով:
	խմբ.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հեռուստաընկերությունները պարտավոր են՝ ա) իրենց հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ հեռարձակել տվյալ ընկերության խորհրդանիշը, բացառությամբ գովազդի հաղորդման ժամանակ. բ) յուրաքանչյուր հեռարձակվող հաղորդման ավարտին նշել (հայտարարել) տվյալ հաղորդման արտադրողի մասին տեղեկություններ:»:
18.	24-րդ հոդվածը փոփ.	24.11.01	ՀՕ-251	Օրենքի 24-րդ հոդվածի «ե» կետի «գործողությունների» բառը փոխարինել «արարքների» բառով:
		03.12.03	ՀՕ-69-Ն	Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների մտավոր և ֆիզիկական զարգացման, բարոյական դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ կողավորված հեռուստառադիոհաղորդումների, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ը: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:
		28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 24-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի «ե» կետի «և անչափահասների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող» բառերը հանել. 2) 3-րդ մասի «սարսափ ֆիլմերը» բառերը փոխարինել «սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը» բառերով, երկրորդ նախադասության «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը» բառերով:
19.	26-րդ հոդվածը փոփ	03.12.03	ՀՕ-69-Ն	Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:
	փոփ., խմբ.	28.04.09	ՀՕ-109-Ն	Օրենքի 26-րդ հոդվածում՝

				<p>1) վերնագրի «սպառողի» բառը փոխարինել «մարդու» բառով.</p> <p>2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  «Եթե հեռուստառադիոընկերությունն իր հաղորդումները հեռարձակում կամ օրենքով սահմանված կարգով վերահեռարձակում է անսահմանափակ թվով անձանց համար և անվճար տեղեկատվություն տալու պայմանով, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի նման ծառայությունից օգտվելու անհատույց և առանց տվյալ հեռուստառադիոընկերությանը տեղեկացնելու:»</p>
20.	<b>28-րդ հոդվածը փոփ.</b>	<b>11.09.01</b>	<b>ՀՕ-223</b>	<p>ա) օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասում «քաղաքացիների» բառը փոխարինել «մարդու» բառով:</p> <p>բ) օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը մշակում է Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգն օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ կից ներկայացնելով իր եզրակացությունը: Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հաստատում է օրենքով:</p>
		<b>26.09.01</b>	<b>ՀՕ-233</b>	<p>Օրենքի 28-րդ հոդվածը՝ 1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ և չորրորդ մասերով.</p> <p>«Հանրային հեռուստառադիոընկերությամբ հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում են այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի համաձայնությամբ՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը կամ այլ հեռուստառադիոընկերությունները:</p> <p>Սահմանադրության 80-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը հարցերով դիմելուն հատկացված՝ Ազգային ժողովի նիստերի տեսագրությունների, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերի ուղիղ հեռարձակումների և Ազգային ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում Ազգային ժողովի նիստերի տեսագրությունների (ձայնագրությունների) արտադրությունն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերությունը: Ազգային ժողովի հերթական նստաշրջանի եռօրյա նիստերի յուրաքանչյուր երեքշաբթի օրվա վերջին նիստում պատգամավորների հայտարարություններին հատկացվող ժամանակահատվածի տեսագրության, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Խորհրդարանական ժամ» հեռուստահաղորդաշարի և այլ հաղորդումների արտադրությունն իրականացնում է Ազգային ժողովի աշխատակազմը:»:</p> <p>Այդ կապակցությամբ՝ հոդվածի երրորդից տասներորդ</p>

			<p>մասերը համապատասխանաբար համարել 5-ից 12-րդ մասեր.</p> <p>2) նոր վեցերորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա» կետով.</p> <p>«ա) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաղորդումները հեռարձակել այդ օրենքով սահմանված կարգով և ժամկետում.»:</p> <p>Այդ կապակցությամբ՝ հոդվածի «ա»-«դ» կետերը համապատասխանաբար համարել «բ»-«ե» կետեր.</p> <p>3) նոր վեցերորդ մասի նոր «դ» կետի 1-ին ենթակետի «վերաբերյալ» բառից հետո լրացնել «պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը)» բառերը.</p> <p>4) նոր ութերորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «դ» կետով.</p> <p>«դ) Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության պաշտոնական հաղորդագրությունների (տեղեկատվության) տևողությունը նրանցից յուրաքանչյուրի համար մեկ օրվա ընթացքում չի կարող գերազանցել 3 րոպեն.»:</p> <p>Այս կապակցությամբ՝ նույն մասի «դ» կետը համարել «ե» կետ.</p> <p>5) նոր ութերորդ մասի «ե» կետը «գովազդի» բառից հետո լրացնել «և գվարձալի հաղորդումների» բառերով.</p> <p>6) «Հանրային հեռուստատադիորնկերությունը հիմնականում ֆինանսավորվում է պետական բյուջեից» նախադասությունը հանել:</p>	
		<b>24.11.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 28-րդ հոդվածի՝</p> <p>ա) առաջին մասի «կանոնադրությանը» բառը փոխարինել «կանոնակարգի» բառով.</p> <p>բ) երկրորդ մասից «բարձրագույն» բառը հանել:</p>
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-71-Ն</b>	<p>Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի «ե» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «, օրվա էթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով»:</p>
		<b>16.11.07</b>	<b>ՀՕ-221-Ն</b>	<p>Օրենքի 28-րդ հոդվածի ութերորդ մասի «գ» կետում «ընտրարշավներից դուրս քաղաքական գովազդի» բառերը փոխարինել «նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածից դուրս նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչական հաղորդումների» բառերով:</p>
	<b>լրաց., փոփ.</b>	<b>26.12.08</b>	<b>ՀՕ-29-Ն</b>	<p>28-րդ հոդվածում՝</p> <p>1) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով.</p> <p>«գ) էթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև 2 ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամ ժամաքանակը: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերը և</p>

				<p>հեռուստահաղորդումները պետք է ուղեկցվեն հայերեն լուսագրով:».</p> <p>2) ուժը կորցրած ճանաչել 7-րդ մասը:</p>
	<i>փոփ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 28-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն և գործում է սույն օրենքի, իր կանոնակարգի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:».</p> <p>2) 4-րդ մասի երկրորդ նախադասության «եռօրյա նիստերի» բառերը փոխարինել «չորսօրյա նիստերի» բառերով, իսկ «Խորհրդարանական ժամ» բառերը փոխարինել «Խորհրդարանական շաբաթ» բառերով.</p> <p>3) 5-րդ մասը «անկողմնակալության» բառից հետո լրացնել «, բազմազանության, բազմակարծության» բառերով.</p> <p>4) 6-րդ մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել.</p> <p>5) 10-րդ մասը «թողարկում» բառից հետո լրացնել « առավոտյան և երեկոյան» բառերով.</p> <p>6) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության կանոնադրությունները հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը:»:</p>
21.	<i>29-րդ հոդվածը փոփ.</i>	<i>24.11.01</i>	<i>ՀՕ-251</i>	<p>Օրենքի 29-րդ հոդվածի՝</p> <p>ա) վեցերորդ մասի «բ» կետը «քաղաքացիները» բառից հետո լրացնել «և քաղաքացիություն չունեցող անձինք» բառերով.</p> <p>բ) յոթերորդ մասի «կանոնադրության» բառը փոխարինել «կանոնակարգի» բառով:</p>
		<i>03.12.03</i>	<i>ՀՕ-69-Ն</i>	Օրենքի 29-րդ հոդվածի վերջին մասն ուժը կորցրած ճանաչել:
	<i>փոփ., խմբ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 29-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասի «, որի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը հանել.</p> <p>2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Խորհուրդը բաղկացած է հինգ անդամներից (առնվազն մեկը՝ կին անդամ), որոնց, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:».</p> <p>3) 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով.</p> <p>«ե) անձինք, որոնք դատապարտվել են դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:».</p> <p>4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.</p> <p>«Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնը ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.</p> <p>«Ստանձնելով Հանրային հեռուստառադիոընկերության</p>

				խորհրդի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ մարդու արտահայտվելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով: Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից»:
22.	<b>31-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.11.01</b>	<b>ՀՕ-251</b>	Օրենքի 31-րդ հոդվածի երրորդ մասի «դ» կետի «վճռով» բառը փոխարինել «դատավճռով» բառով:
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-69-Ն</b>	Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Խորհրդում թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահն այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը մեկշաբաթյա ժամկետում զանգվածային լրատվության միջոցներով հայտարարում է թափուր տեղի համալրման համար մրցույթ: Խորհրդի անդամի թափուր տեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ոք՝ սույն օրենքի պահանջների համաձայն: Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ: Թեկնածուների վերաբերյալ տվյալները հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով: Հայաստանի Հանրապետության Նախագահը, իր կողմից հաստատված մրցութային կարգի համաձայն, մրցույթում հաղթողներից մեկին նշանակում է Խորհրդի անդամ: Այդ մասին տեղեկությունը՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով»:
	<b>լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետով. «է) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ճանաչվել է անգործունակ»:
23.	<b>32-րդ հոդվածը փոփ.</b>	<b>11.09.01</b>	<b>ՀՕ-223</b>	Օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«գ) մշակում և կառավարություն է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության կանոնակարգը»:
		<b>24.11.01</b>	<b>ՀՕ-251</b>	Օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի՝ ա) «ը» կետի վերջում «տնօրեններին» բառից առաջ լրացնել «գործադիր» բառը. բ) «թ» կետի սկիզբը լրացնել «Հանրային հեռուստառնկերության և Հանրային ռադիոընկերության» բառերով:

	<i>փոփ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում՝</p> <p>1) «բ» կետը ուժը կորցրած ճանաչել.</p> <p>2) «դ» կետը «կարգը» բառից հետո լրացնել «և ուղղությունները» բառերով.</p> <p>3) լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը1» կետով.</p> <p>«ը1) Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում են Խորհրդի անդամների ձայների երկու երրորդով»:</p>
24.	<i>33-րդ հոդվածը փոփ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 33-րդ հոդվածում՝</p> <p>1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա1» կետով.</p> <p>«ա1) հաստատում է ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, հաղորդացանցը».</p> <p>2) 2-րդ մասի «ե» կետի «երկրում, արտասահմանում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում» բառերով.</p> <p>3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:</p>
25.	<i>35-րդ հոդվածը խմբ.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 35-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p><b>«Հոդված 35. Հանրային հեռուստառադիոընկերության պետական ֆինանսավորումը</b></p> <p>Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճի դեպքում Հանրային հեռուստառադիոընկերության համար նախատեսվում են նախորդ տարվա պետական բյուջեով հաստատված ոչ պակաս հատկացումներ: Այդ հատկացումները պետք է ապահովեն օրենքում ամրագրված՝ Խորհրդի լիազորությունների իրականացումը:</p> <p>Խորհուրդը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա՝ Հանրային հեռուստառադիոընկերության ծախսերի նախահաշիվը (բյուջեն)՝ առանձին տողով նշելով Խորհրդի, Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, վերջինս էլ դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը»:</p>
26.	<i>36-րդ հոդվածը խմբ.</i>	<i>11.09.01</i>	<i>ՀՕ-223</i>	<p>Օրենքի 36-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p><b>«ՀՈՒՎԱԾ 36. ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ</b></p> <p>Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության նախորդ տարվա գործունեության (այդ թվում՝ ծրագրային և ֆինանսական) մասին հաղորդում:</p> <p>Հաղորդումն Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Խորհրդի նախագահը: Հաղորդումն Ազգային ժողովի նիստում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդունվում է ի գիտություն:</p> <p>Խորհուրդը հաղորդումը հրապարակում է մամուլում»:</p>

	<i>խմբ., լրաց.</i>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 36-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության նախորդ տարվա գործունեության (այդ թվում՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում»:</p> <p>2) 3-րդ մասը «մամուլում» բառից հետո լրացնել «, ինչպես նաև տեղադրում է Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոընկերության ինտերնետային կայքերում:» բառերով:</p>
27.	<b>37-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 37-րդ հոդվածի՝</p> <p>ա) առաջին մասի «կանոնադրությամբ» բառը փոխարինել «կանոնակարգով» բառով.</p> <p>բ) երկրորդ մասի «ա» կետը «մրցութային հատկացումը» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.</p> <p>«ու ապահովում է մրցությունների արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակումը.».</p> <p>գ) երկրորդ մասի «բ» կետի «արտոնագրերի (լիցենզիաների) ձևերը» բառերը փոխարինել «արտոնագրի (լիցենզիայի) ձևերը» բառերով.</p> <p>դ) երկրորդ մասի «թ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«թ» սույն օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված դեպքում ուժը կորցրած է ճանաչում տրված արտոնագիրը:»:</p>
	<i>խմբ.</i>	<b>26.02.07</b>	<b>ՀՕ-99-Ն</b>	<p>37-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով) կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորել և վերահսկել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը: Հանձնաժողովը կազմված է 8 անդամից:»:</p>
	<i>լրաց.</i>	<b>16.11.07</b>	<b>ՀՕ-221-Ն</b>	<p>Օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ</p> <p>«ժ» կետով.</p> <p>«ժ» վերահսկում է հեռուստառադիոընկերության (հեռուստաընկերության կամ ռադիոընկերության) կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանման նկատմամբ և նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմել դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով:»:</p>
	<i>խմբ., լրաց.</i>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 37-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով) կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող</p>

				<p>լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների, այդ թվում՝ Հանրային հեռուստառադիոընկերության գործունեության վերահսկումը»:</p> <p>2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ի» կետով.</p> <p>«ի» ստանում, գրանցում, ուսումնասիրում և հիմնավոր պատասխանում կամ եզրակացություն է տալիս ցանկացած հեռուստառադիոընկերության գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին»:</p> <p>3) 2 -րդ մասի «ը» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«ը» սույն օրենքի խախտման կամ լիցենզիայի պայմանները և(կամ) իր որոշումները չկատարելու դեպքում գրավոր նախազգուշացնում է տվյալ հեռուստառադիոընկերությանը՝ պարտավորեցնելով բավարարել ներկայացվող պահանջները, իսկ դրանք չկատարելու կամ կրկնակի խախտելու դեպքում կասեցնում է հեռուստառադիոընկերության տվյալ հաղորդաշարի գործունեությունը՝ մինչև խախտումների վերացումը կամ դատարանի համապատասխան որոշում կայացնելը»:</p>
	<b>38-րդ հոդվածը խմբ.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 38-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճի դեպքում Ազգային հանձնաժողովի համար նախատեսվում են նախորդ տարվա պետական բյուջեով հաստատված ոչ պակաս հատկացումներ: Այդ հատկացումները պետք է ապահովեն օրենքով ամրագրված՝ Ազգային հանձնաժողովի լիազորությունների իրականացումը:</p> <p>Ազգային հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա իր ծախսերի նախահաշիվը (բյուջեն) և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության, որը տվյալ տարվա պետական բյուջեի կազմում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը»:</p>
<b>28.</b>	<b>39-րդ հոդվածը փոփ.</b>	<b>16.12.05</b>	<b>ՀՕ-21-Ն</b>	<p>39-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Ազգային հանձնաժողովի անդամ»:</p>
	<b>խմբ.</b>	<b>26.02.07</b>	<b>ՀՕ-99-Ն</b>	<p>Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային հանձնաժողովը անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կետը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կետը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով, բացառությամբ առաջին կազմի»:</p>

	<i>խմբ.</i>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 39-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Ազգային հանձնաժողովը անկախ կարգավորող պետական մարմին է, որի անդամների կեսը մրցութային կարգով վեց տարի ժամկետով ընտրվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը վեց տարի ժամկետով նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից, բացառությամբ առաջին կազմի: Առաջին կազմի նշանակման ժամկետները սահմանված են սույն օրենքի անցումային դրույթներով:</p> <p>Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղում նշանակումը կամ ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովելով Ազգային հանձնաժողովի անդամների կեսի ընտրությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, իսկ մյուս կեսի նշանակումը Հանրապետության Նախագահի կողմից:</p> <p>Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին կամ Հանրապետության Նախագահին:</p> <p>Ազգային ժողովը Ազգային հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Ազգային ժողովի որոշմամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:</p> <p>Հանրապետության Նախագահը, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, մրցություն հաղթած թեկնածուին նշանակում է Ազգային հանձնաժողովի անդամ: Այդ մասին տեղեկությունը անհրաժեշտ հիմնավորմամբ հրապարակվում է մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով:</p> <p>Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)՝ իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ թափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:</p> <p>Ազգային հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և նախագահի տեղակալ:</p> <p>Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Ազգային հանձնաժողովի անդամ:»</p>
29	<b>40-րդ հոդվածը խմբ.</b>	<b>11.09.01</b>	<b>ՀՕ-223</b>	<p>Օրենքի 40-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«ՀՈՂՎԱԾ 40. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՋՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ  Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում:</p> <p>Ազգային հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում է մամուլում:»</p>

	<i>խմբ.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 40-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 40. Ազգային հանձնաժողովի հաղորդումը</p> <p>«Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում:</p> <p>Հաղորդումը ներառում է Ազգային հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ ազատ հաճախությունների, դրանց համար հայտարարված մրցույթների, հատկացված կամ մերժված դիմումների և դրանց հիմնավորման վերաբերյալ, բացահայտված խախտումների և դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների, վարչական տույժերից գանձված վճարների չափի և այլ լիազորությունների մասին):</p> <p>Հաղորդումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախագահը կամ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդունվում է ի գիտություն:</p> <p>Ազգային հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում է մամուլում, ինչպես նաև տեղադրում է Ազգային հանձնաժողովի ինտերնետային կայքում:</p> <p>Ազգային հանձնաժողովի ընդունած նորմատիվ բնույթի բոլոր որոշումները հրապարակվում են մամուլում:»:</p>
30.	<i>41-րդ հոդվածը փոփ.</i>	<i>20.02.01</i>	<i>ՀՕ-143</i>	<p>41-րդ հոդվածի վերջին մասում «նախագահի, տեղակալի և անդամների» բառերը փոխարինել «նախագահի և տեղակալի» բառերով: Օրենքի 41-րդ հոդվածը լրացնել նոր մասով. «Ազգային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով և իրենց գործունեության հետ կապված ծախսերի համար ստանում են ամսական դրամական փոխհատուցում:»</p>
		<i>24.10.01</i>	<i>ՀՕ-251</i>	<p>Օրենքի 41-րդ հոդվածի երկրորդ մասից հանել «բ» կետը: Այդ կապակցությամբ՝ «գ» և «դ» կետերը համապատասխանաբար համարել «բ» և «գ» կետեր:</p>
		<i>03.12.03</i>	<i>ՀՕ-69-Ն</i>	<p>Օրենքի 41-րդ հոդվածի նախավերջին մասն ուժը կորցրած ճանաչել:</p>
	<i>խմբ., լրաց., փոփ.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 41-րդ հոդվածում՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 41. Ազգային հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները, նրանց վարձատրության կարգը».</li> <li>2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային հանձնաժողովի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի լրագրության, հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսության, կառավարման, տեխնիկայի, մշակույթի, արվեստի, գիտության և իրավագիտության, կրոնի բնագավառներում մասնագիտական աշխատանքի փորձ, բարձրագույն կրթություն, հասարակության լայն շրջանում՝ հեղինակություն ու վստահություն և տիրապետում է հայերենին:</li> </ol>

				<p>Ազգային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.</p> <p>«Ստանձնելով Ազգային հանձնաժողովի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ մարդու արտահայտվելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով:</p> <p>Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից:».</p> <p>3) 2-րդ մասի «ա» կետը «անդամները» բառից հետո, իսկ «բ» կետը «ղեկավարները» բառից հետո լրացնել «և նրանց փոխկապակցված անձինք» բառերով.</p> <p>4) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» և «ե» կետերով.</p> <p>«դ) այն անձը, որը դատապարտվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.</p> <p>ե) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատակիցները և պետական ծառայողները:».</p> <p>5) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.</p> <p>6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Ազգային հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքներն իրականացնում են վճարովի հիմունքներով:»:</p>
31.	<b>42-րդ հոդվածը փոփ.</b>	<b>11.09.01</b>	<b>ՀՕ-223</b>	<p>Օրենքի 42-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Ազգային հանձնաժողովը մշակում է Ազգային հանձնաժողովի կանոնակարգը և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն: Հայաստանի Հանրապետության կառավարությունն Ազգային հանձնաժողովի կանոնակարգը օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով՝ կից ներկայացնելով իր եզրակացությունը: Ազգային հանձնաժողովի կանոնակարգը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հաստատում է օրենքով:»:</p>
		<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի «կանոնադրությամբ» բառը փոխարինել «կանոնակարգով» բառով:</p>
	<b>փոփ., լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 42-րդ հոդվածում</p> <p>1) 1-ին մասի «օրենսդրությամբ» բառը փոխարինել «իրավական այլ ակտերով» բառերով.</p> <p>2) 3-րդ մասը «սկզբունքներն են» բառերից հետո լրացնել «օրինականությունը, ժողովրդավարությունը,</p>

				հավասարությունը, անաչառությունը» բառերով:
32.	<b>43-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 43-րդ հոդվածի՝</p> <p>ա) երկրորդ մասի «բ» կետի «կեսից ավելին» բառերը փոխարինել «երկու երրորդը» բառերով.</p> <p>բ) երկրորդ մասի «գ» կետի «հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների» բառերը փոխարինել «հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի» բառերով.</p> <p>գ) երրորդ մասի «խորհրդի նախագահը՝» բառերը փոխարինել «հանձնաժողովի նախագահը՝» բառերով:</p>
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-69-Ն</b>	<p>Օրենքի 43-րդ հոդվածի՝</p> <p>1) «բ» կետի «երկու երրորդը» բառերը փոխարինել «կեսից ավելին» բառերով.</p> <p>2) «գ» կետի «անդամների ընդհանուր թվի» բառերը փոխարինել «նիստին ներկա անդամների» բառերով.</p> <p>3) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.</p> <p>«Եթեբային հաճախություններ հատկացնելու, արտոնագիր տալը մերժելու, տրված արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու, սույն օրենքը խախտելու համար տույժեր կիրառելու, ինչպես նաև հեռարձակողների գործունեությանն առնչվող ցանկացած որոշում Ազգային հանձնաժողովը կայացնում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:»</p>
33.	<b>44-րդ հոդվածը լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.</p> <p>«Ազգային հանձնաժողովի աշխատակազմում չեն կարող ընդգրկվել սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «ե» կետերով նախատեսված անձինք:»</p>
34.	<b>45-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի «դ» կետում «վճռով» բառը փոխարինել «դատավճռով» բառով:</p>
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-69-Ն</b>	<p>Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Ազգային հանձնաժողովում թափուր տեղի առկայության դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը մեկշաբաթյա ժամկետում զանգվածային լրատվության միջոցներով հայտարարում է թափուր տեղի համալրման համար մրցույթ:</p> <p>Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ոք՝ սույն օրենքի պահանջների համաձայն:</p> <p>Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:</p> <p>Թեկնածուների վերաբերյալ տվյալները հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով:</p> <p>Հայաստանի Հանրապետության Նախագահը, իր կողմից հաստատված մրցութային կարգի համաձայն, մրցույթում հաղթողներից մեկին նշանակում է Ազգային հանձնաժողովի անդամ: Այդ մասին տեղեկությունը՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով:»</p>

<p><i>խմբ.</i></p>	<p>26.02.07</p>	<p>ՀՕ-99-Ն</p>	<p>Օրենքի 45-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  «Հոդված 45. Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցումը  Ազգային հանձնաժողովի անդամը չի կարող նախքան պաշտոնավարության ժամկետը լրանալը հետ կանչվել իր պաշտոնից: Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ դեպքերում, երբ՝  ա) հրաժարական է տվել.  բ) Ազգային հանձնաժողովի նախագահը կամ Ազգային հանձնաժողովի նախագահի տեղակալը ընտրվել կամ նշանակվել է որևէ այլ պաշտոնում.  գ) առանց հարգելի պատճառի երեք ամսից ավելի չի մասնակցել Ազգային հանձնաժողովի աշխատանքներին.  դ) դատապարտվել է դատարանի դատավճռով.  ե) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.  զ) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.  է) մահացել է:  Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից նշանակված Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:  Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից նշանակված Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի որոշմամբ:  Ազգային հանձնաժողովում թափուր տեղի առկայության դեպքում թափուր տեղում նշանակումները կամ ընտրությունները կատարվում են այն հաշվով, որ վերականգնվի Սահմանադրության 83<sup>2</sup> հոդվածով սահմանված հավասարակշռությունը, այսինքն՝ անդամների կեսը ընտրված լինի Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակված լինի Հանրապետության Նախագահի կողմից: Ազգային ժողովը հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Ազգային ժողովի որոշմամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հանրապետության Նախագահը հանձնաժողովի անդամի նշանակումը կատարում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:  Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)՝ իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ թափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:  Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընդգրկվել Ազգային հանձնաժողովի կազմում:  Մույն հոդվածի առաջին մասում նշված հիմքերով Ազգային հանձնաժողովում թափուր տեղեր առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին հայտնում է</p>
--------------------	-----------------	----------------	--

				համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Նախագահին կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:»:
	<i>խմբ., լրաց., փոփ.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	Օրենքի 45-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ) ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնի.» 2) 1-ին մասի «դ» կետը «դատարանի» բառից հետո լրացնել «օրինական ուժի մեջ մտած» բառերով. 3) 2-րդ և 3-րդ մասերը «անդամի լիազորությունները» բառերից հետո լրացնել «սույն օրենքով սահմանված դեպքերում» բառերով. 4) ուժը կորցրած ճանաչել 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը
35.	<i>46-րդ հոդվածը փոփ.</i>	<i>20.02.01</i>	<i>ՀՕ-143</i>	Օրենքի 46-րդ հոդվածի երկրորդ մասի «նախագահը, տեղակալն ու անդամները» բառերը փոխարինել «նախագահը և տեղակալը» բառերով
	<i>փոփ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	Օրենքի 46-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասի «նախագահը և տեղակալը» բառերը փոխարինել «նախագահը, տեղակալը և անդամները» բառերով. 2) 3-րդ մասը լրացնել «և (կամ) նրանց փոխկապակցված անձինք» բառերով:
36.	<i>47-րդ հոդվածը փոփ.</i>	<i>24.10.01</i>	<i>ՀՕ-251</i>	Օրենքի 47-րդ հոդվածի՝ ա) վերնագրում «Արտոնագրի (լիցենզիայի) տեսակները» բառերը փոխարինել «Արտոնագրում (լիցենզավորում)» բառերով. բ) առաջին մասի «արտադրություն» բառերը փոխարինել «հետարձակում» բառերով. գ) երկրորդ և երրորդ մասերը հանել: Այդ կապակցությամբ՝ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ մասերը համապատասխանաբար համարել երկրորդ, երրորդ և չորրորդ մասեր. դ) նոր երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հեռուստառադիոհաղորդումների հետարձակման արտոնագիրը (լիցենզիան) տրվում է մրցութային կարգով՝ հաճախությունների ցանկին համապատասխան:»:
37.	<i>48-րդ հոդվածը փոփ.</i>	<i>03.12.03</i>	<i>ՀՕ-69-Ն</i>	Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Բոլոր ազատ հաճախությունների միաժամանակյա մրցույթը պարտադիր չէ:»

	<i>խմբ., լրաց.</i>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 48-րդ հոդվածում՝</p> <p>1) 2-րդ մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«բ) հիմք ընդունելով տվյալ տարվա եթերային հաճախությունների առկա վիճակը մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը սահմանում է ազատ (չգրադեցրած) հաճախությունների համար մրցույթի անցկացման կարգը, իսկ մրցույթի պայմանները և ժամկետները հրապարակում է մրցույթի հայտարարումից առնվազն 3 ամիս առաջ.»</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով.</p> <p>«Արտոնագրման (լիցենզավորման) արդյունքների մասին Ազգային հանձնաժողովը տասնհինգօրյա ժամկետում տեղեկացնում է հեռահաղորդակցության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինին:</p> <p>Ամիսը մեկ, բայց ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 15-ը հեռահաղորդակցության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Ազգային հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստառադիոընկերությունների փաստացի սփռման տարածքների վերաբերյալ:</p> <p>Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված ապօրինի հեռարձակման կամ ապօրինի չհեռարձակման դեպքերի մասին հեռահաղորդակցության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը եռօրյա ժամկետում տեղեկացնում է Ազգային հանձնաժողովին:»</p>
<b>38.</b>	<b>49-րդ հոդվածը փոփ., լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում՝</p> <p>1) լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ1» կետով.</p> <p>«դ1) հեռուստաընկերության և (կամ) ռադիոընկերության բիզնես ծրագիրը.»</p> <p>2) «ժ» կետը «աղբյուրների» բառից հետո լրացնել «փաստաթղթային հիմնավորումների» բառերով:</p>
		<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 49-րդ հոդվածի՝ ա) առաջին մասը հանել: Այդ կապակցությամբ՝ երկրորդ և երրորդ մասերը համապատասխանաբար համարել առաջին և երկրորդ մասեր.</p> <p>բ) նոր առաջին մասից հանել «արտադրության և» բառերը.</p> <p>գ) նոր երկրորդ մասը «տուրքի» բառից առաջ լրացնել «մրցույթին մասնակցելու համար» բառերով:</p>
<b>39.</b>	<b>50-րդ հոդվածը փոփ., լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	<p>Օրենքի 50-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ1», «բ2», «բ3» և «բ4» կետերով.</p> <p>«բ1) հեռուստաընկերության և (կամ) ռադիոընկերության բիզնես ծրագիրը և դրա իրատեսականությունը.</p> <p>բ2) մրցութային հայտում ներկայացված հաղորդումների բազմազանությունը.</p> <p>բ3) դիմողի՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը.</p> <p>բ4) մրցութային հայտով եթերային բազմազանություն ասպահովելու առաջարկությունը:».</p> <p>2) 2-րդ մասը «ելնելով» բառից հետո լրացնել «ֆինանսական աղբյուրների փաստաթղթային հիմնավորվածության և»</p>

				բառերով. 3) 3-րդ մասը «որոշումները» բառից հետո լրացնել «և ապահովում բոլոր հիմնավորումների հրապարակայնությունն ու մատչելիությունը» բառերով:
		<b>03.12.03</b>	<b>ՀՕ-69-Ն</b>	Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասեր. «Ազգային հանձնաժողովը սահմանում է պահանջներ՝ տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ, իսկ ֆինանսական հնարավորությունները գնահատվում են՝ ելնելով ներկայացված ծրագիրն իրագործելու համար դրանց բավարար կամ ոչ բավարար լինելու սկզբունքից: Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու և արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները:»:
40.	<b>51-րդ հոդվածը փոփ.</b>	<b>20.02.01</b>	<b>ՀՕ-143</b>	Օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասում «տրվում է» բառերը փոխարինել «չի տրվում» բառերով:
	<b>լրաց.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» կետով. «դ) դիմողի ներկայացրած բիզնես ծրագրի իրատեսականությունը և(կամ) ֆինանսավորման աղբյուրները փաստաթղթային առումով հիմնավորված չեն:»:
41.	<b>53-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	Օրենքի 53-րդ հոդվածի՝ ա) երկրորդ մասը հանել: Այդ կապակցությամբ՝ երրորդ և չորրորդ մասերը համապատասխանաբար համարել երկրորդ և երրորդ մասեր. բ) նոր երկրորդ մասից հանել «կամ արտադրության և հեռարձակման» բառերը, իսկ «հազարապատիկը» բառը փոխարինել «հինգհարյուրապատիկը» բառով:
	<b>խմբ., փոփ.</b>	<b>28.04.09</b>	<b>ՀՕ-109-Ն</b>	Օրենքի 53-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արտոնատիրոջ իրավունք ստացած իրավաբանական անձին Ազգային հանձնաժողովն հեռուստատեղիորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) է տալիս օրենքով սահմանված կարգով պետական տուրք մուծելուց հետո 10-օրյա ժամկետում:». 2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:
42.	<b>54-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	Օրենքի 54-րդ՝ ա) հոդվածի առաջին մասը հանել: Այդ կապակցությամբ՝ երկրորդ և երրորդ մասերը համապատասխանաբար համարել առաջին և երկրորդ մասեր. բ) հոդվածի նոր առաջին մասից հանել «կամ արտադրության և հեռարձակման» բառերը. գ) հոդվածի նոր առաջին մասի «բ» կետի «հինգ տարով՝» բառերը փոխարինել «յոթ տարով՝» բառերով. դ) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Ազատված հաճախությամբ հեռարձակման արտոնագրի (լիցենզիայի) համար մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է՝ ա) գործող այն հեռուստատեղիորդություններին, որոնք

				<p>իրենց գործունեության ընթացքում օրենսդրության խախտումներ թույլ չեն տվել.</p> <p>բ) գործող այն ընկերություններին, որոնք հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում ունեն առնվազն 3 տարվա փորձ: Ամբողջական վերահեռարձակման համար սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հեռուստառադիոհաճախությունների 1/5-ը զբաղված չլինելու և վերահեռարձակման հայտի առկայության դեպքում նախապատվությունը կարող է տրվել վերահեռարձակողին:»:</p>
		<i>03.12.03</i>	<i>ՀՕ-69-Ն</i>	<p>Օրենքի 54-րդ հոդվածի երկրորդ մասի «երկու» բառը փոխարինել «վեց» բառով:</p>
<b>43.</b>	<b>55-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 55-րդ հոդվածի՝</p> <p>ա) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արտոնագրի (լիցենզիայի) ուժը կորցրած ճանաչելը».</p> <p>բ) առաջին մասի «արտոնագիրը (լիցենզիան) չեղյալ հայտարարել» բառերը փոխարինել «արտոնագիրը (լիցենզիան) ուժը կորցրած ճանաչել» բառերով.</p> <p>գ) առաջին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) հեռուստառադիոընկերության՝ տեխնիկական միջոցների ընդունված ստանդարտներին անհամապատասխանությունը, որը հաստատված է փորձաքննությամբ և վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, արգելքներ է ստեղծում այլ հեռուստառադիոընկերությունների գործունեության համար, չի ապահովում հեռուստառադիոհաղորդումների տեխնիկական որակը, և Ազգային հանձնաժողովի զգուշացումներից հետո՝ 15 օրվա ընթացքում, դրանք չեն վերացվել.».</p> <p>դ) երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային հանձնաժողովի որոշումը՝ արտոնագիրը (լիցենզիան) ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, կարող է գանգատարկվել դատական կարգով: Արտոնագիրն անհիմն ուժը կորցրած ճանաչելու դեպքում Ազգային հանձնաժողովը պարտավոր է հատուցել տվյալ հեռուստառադիոընկերությանը պատճառած վնասը:», <i>03.12.03 ՀՕ-69-Ն</i>, (Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետ. « է) խախտվել են օրենքի 24-րդ հոդվածի պահանջները:»:</p>
	<i>փոփ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	<p>Օրենքի 55-րդ հոդվածում՝</p> <p>1) 1-ին մասի «գ» կետի «տասնհինգ» բառը փոխարինել «երեսուն» բառով.</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար արտոնագրատերը ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝</p> <p>ա) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.</p>

			<p>բ) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ տեղյակ է պահել Ազգային հանձնաժողովին և ստացել թույլտվություն.</p> <p>գ) վթարի կամ աղետների հետևանքով: Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում հեռուստատաղիորնկերությունները ողջամիտ ժամկետում վերականգնում են հեռուստատաղիոհաղորդումների հեռարձակումը՝ պահպանելով և ապահովելով արտոնագրի (լիցենզիայի) պայմանները:»:</p>
<b>58-րդ հոդվածը փոփ.</b>	<b>24.10.01</b>	<b>ՀՕ-251</b>	<p>Օրենքի 58-րդ հոդվածի՝</p> <p>ա) առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքի դրույթների, Ազգային հանձնաժողովի որոշումների և սույն բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերի, ինչպես նաև արտոնագրի (լիցենզիայի) պայմանները չկատարելու կամ խախտելու դեպքում Ազգային հանձնաժողովն այդ մասին գրավոր նախազգուշացնում է տվյալ հեռուստատաղիորնկերությանը (հեռուստարնկերությանը կամ ռադիոընկերությանը), որը պարտավոր է ողջամիտ ժամկետում կատարել ներկայացվող պահանջները: Գրավոր նախազգուշացումում ներկայացվող պահանջները չկատարելու դեպքում Ազգային հանձնաժողովն իրավասու է՝</p> <p>ա) տվյալ հեռուստատաղիորնկերության (հեռուստարնկերության կամ ռադիոընկերության) նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով.</p> <p>բ) իր որոշմամբ կասեցնել տվյալ հեռուստատաղիորնկերության (հեռուստարնկերության կամ ռադիոընկերության) կամ նրա հաղորդաշարի գործունեությունը՝ մինչև դատարանի կողմից համապատասխան որոշման կամ վճռի օրինական ուժի մեջ մտնելը:».</p> <p>բ) օրենքի նախկին առաջին մասի «դ» և «ե» կետերը միացնել, համարել նոր մաս և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ազգային հանձնաժողովն իրավասու է սույն օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված դեպքերում իր որոշմամբ ուժը կորցրած ճանաչել օրենսդրությունը խախտող հեռուստատաղիորնկերության (հեռուստարնկերության կամ ռադիոընկերության) արտոնագիրը (լիցենզիան), ինչպես նաև դիմել դատարան՝ տվյալ հեռուստատաղիորնկերությանը (հեռուստարնկերությանը կամ ռադիոընկերությանը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան այլ պատասխանատվության ենթարկելու հայցով:»: Այդ կապակցությամբ՝ երկրորդ, երրորդ և չորրորդ մասերը համապատասխանաբար համարել երրորդ, չորրորդ և հինգերորդ մասեր.</p> <p>գ) նոր երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածով Ազգային հանձնաժողովին լիազորված իրավասությունների կիրառման դեպքերը և կարգը սահմանվում է Ազգային հանձնաժողովի կանոնակարգով:».</p>

				դ) նոր չորրորդ մասի վերջում «ծանուցագրի պահանջների կամ տուգանքի կիրառման» բառերը փոխարինել «գրավոր նախագուշացման պահանջների կամ վարչական տույժի կիրառման» բառերով:
	<i>խմբ., լրաց.</i>	<i>28.04.09</i>	<i>ՀՕ-109-Ն</i>	Օրենքի 58-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ) իր որոշմամբ կասեցնել տվյալ հեռուստաընկերության և(կամ) ռադիոընկերության (բացառությամբ Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության) կամ նրա հաղորդաշարի գործունեությունը՝ մինչև Ազգային հանձնաժողովի արձանագրած և ներկայացրած խախտումների վերացումը կամ դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելը»: 2) 2-րդ մասը «արտոնագիրը (լիցենզիան)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության)» բառերով:):
44.	<i>59-րդ հոդվածը փոփ.</i>	<i>11.09.01</i>	<i>ՀՕ-223</i>	Օրենքի 59-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կառավարությունը Հանրային հեռուստառադիոընկերության և Ազգային հանձնաժողովի կանոնակարգերը և դրանց վերաբերյալ իր եզրակացությունները ներկայացնում է Ազգային ժողով:»:
	<i>լրաց.</i>	<i>24.10.01</i>	<i>ՀՕ-251</i>	Օրենքի 59-րդ հոդվածի հինգերորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.«Վարձակալական հիմունքներով հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունները շարունակում են իրենց գործունեությունը մինչև համապատասխան հաճախություններով հեռուստառադիոհեռարձակման արտոնագրի համար մրցույթի հաղթողի ճանաչվելը:»:
		<i>10.09.08</i>	<i>ՀՕ-137-Ն</i>	Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011 թվականի հունվարի 21-ը:»:
		<i>26.12.08</i>	<i>ՀՕ-29-Ն</i>	Օրենքի 59-րդ հոդվածի վերջին մասի երկրորդ նախադասության «հեռուստաընկերությունները» բառը փոխարինել «հեռուստառադիոընկերությունները» բառով: